

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Արտակարգ դրությունը

1. Արտակարգ դրությունը՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ նրա առանձին տարածքներում հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է:

2. Արտակարգ դրությունը հայտարարվում է միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելու կամ տապալելու, իշխանությունը զավթելու փորձերը, զինված խռովությունները, զանգվածային անկարգությունները, բռնի գործողություններով ուղեկցվող ազգային, ռասայական, կրոնական հակամարտությունները, ահաբեկչական ակտերը, հատուկ նշանակության օբյեկտների գրավումը կամ շրջափակումը, անօրինական զինված միավորումների ստեղծումը և գործունեությունը, արտակարգ իրավիճակները:

3. Արտակարգ դրությունը հայտարարվում է միայն այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի վերացումն առանց դրա անհնարին է:

Հոդված 2. Արտակարգ դրության մասին իրավական ակտերը

1. Արտակարգ դրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, այլ օրենքերով,

Հանրապետության Նախագահի արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրով, *Ազգային ժողովի* որոշմամբ, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Արտակարգ դրություն հայտարարելու կարգը

1. Սույն օրենքի 1-ին *հոդվածին համապատասխան* Հանրապետության Նախագահը՝ խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող՝ սույն օրենքով նախատեսված միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

2. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագիրը, ինչպես նաև հրամանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները ենթակա են անհապաղ հրապարակման հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով: Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե Հանրապետության Նախագահի հրամանագրում ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

3. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագիրը, ինչպես նաև հրամանագրում կատարվող փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ ներկայացվում են *Ազգային ժողով*:

4. Արտակարգ դրություն հայտարարվելու, ինչպես նաև արտակարգ դրություն հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքերում, բացառությամբ իրավական ռեժիմի մեղմացման դեպքերի, իրավունքի ուժով անհապաղ գումարվում է *Ազգային ժողովի* հատուկ նիստ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Արտակարգ դրություն հայտարարելու մասին անհապաղ տեղեկացվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական

ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների ղեկավարները, Միավորված Ազգերի Կազմակերպության և Եվրոպայի Խորհուրդի Գլխավոր Քարտուղարները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունները և քարտուղարությունները՝ միջազգային կազմակերպություններում:

Հոդված 4. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի բովանդակությունը

1. Արտակարգ դրություն հայտարարելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրում պետք է սահմանվեն՝

1) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները.

2) արտակարգ դրություն հայտարարելու անհրաժեշտության հիմնավորումը.

3) այն տարածքի սահմանները, որտեղ հայտարարվում է արտակարգ դրություն.

4) արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցառումները, միջոցները և ուժերը.

5) ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր սահմանափակվող իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև իրավունքների և ազատությունների սահմանափակումների ծավալը՝ համաձայն սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջների.

6) արտակարգ դրության ժամանակահատվածում սույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն ստեղծված պետական հատուկ մարմինները և նրանց իրավասության շրջանակները.

7) արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք.

8) արտակարգ դրության ուժի մեջ մտնելու օրը, ամիսը, ամսաթիվը և դրա գործողության ժամկետները:

Հոդված 5. Արտակարգ դրության գործողության ժամկետը

1. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվող արտակարգ դրության ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը, իսկ առանձին տարածքներում՝ 60 օրը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետների ավարտից հետո արտակարգ դրությունը դադարում է: Եթե նշված ժամկետների ընթացքում չեն վերացել այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել արտակարգ դրություն հայտարարելու համար, արտակարգ դրության ժամկետը կարող է երկարաձգվել Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ սույն օրենքով արտակարգ դրություն հայտարարելու համար սահմանված կարգով և սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները չգերազանցող ժամկետներով:

Հոդված 6. Արտակարգ դրության դադարումը

1. Եթե արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները վերացել են մինչև արտակարգ դրության գործողության ժամկետի ավարտը, ապա արտակարգ դրությունը դադարեցվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով, որը ենթակա է անհապաղ հրապարակման հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով: Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2. *Ազգային ժողովը* կարող է չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված ինչպես առանձին, այնպես էլ բոլոր միջոցառումների իրականացումը:

3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու դեպքում արտակարգ դրությունը դադարում է, իսկ առանձին միջոցառման իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում դադարում է այդ միջոցառման հետագա իրականացումը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված որոշումն ուժի մեջ է մտնում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով հրապարակվելու պահից: Ազգային ժողովի որոշումը հրապարակվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:

Հոդված 7. Արտակարգ դրության ժամանակ կիրառվող միջոցառումները և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները

1. Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում, արտակարգ դրության ընթացքում արտակարգ դրության տարածքում կարող են կիրառվել հետևյալ միջոցառումները և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները.

1) անձանց տեղաշարժման ազատության սահմանափակում, ինչպես նաև նշված տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի սահմանում, ներառյալ օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց՝ տվյալ տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու սահմանափակումները.

2) հասարակական կարգի, պետական պահպանության ենթակա օբյեկտների, ինչպես նաև բնակչության կենսաապահովման և տրանսպորտի օբյեկտների պահպանության ուժեղացում.

3) ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման, ներառյալ՝ ծառայությունների մատուցման, ապրանքների և ֆինանսական միջոցների շրջանառության սահմանափակումներ.

4) սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության հատուկ կարգի սահմանում.

5) հավաքներ կամ հանրային միջոցառումներ իրականացնելու սահմանափակում կամ արգելում.

6) գործադուլների և իրավաբանական անձանց գործունեությունը կասեցնող կամ դադարեցնող այլ միջոցառումների արգելում.

7) տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակում և դրանց զննման իրականացում.

8) վտանգավոր արտադրությունների, պայթուցիկ, ռադիոակտիվ, քիմիական և կենսաբանական վտանգավոր նյութեր օգտագործող կազմակերպությունների գործունեության նկատմամբ հատուկ պետական վերահսկողության սահմանում կամ դրանց գործունեության կասեցում.

9) գործադիր իշխանության հանրապետական մարմինների և տարածքային կառավարման մարմինների լիազորությունների ժամանակավոր սահմանափակում կամ կասեցում.

10) նյութական և մշակութային արժեքների տարահանում, եթե իրական վտանգ կա արտակարգ դրության ժամանակ դրանց ոչնչացման, հափշտակության կամ վնասման համար.

11) պարետային ժամի սահմանում, այսինքն՝ ամբողջ օրը կամ օրվա որոշակի ժամանակահատվածում առանց անձը հաստատող փաստաթղթերի և (կամ) հատուկ թույլտվության փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելում, ինչպես նաև օրվա որոշակի ժամանակահատվածում փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելում.

12) խոսքի ազատության սահմանափակում, մասնավորապես՝ զանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելում.

13) անձը հաստատող փաստաթղթերի ստուգում, անձնական առարկաների զննում.

14) զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի, հատուկ միջոցների վաճառքի արգելում, հատուկ ռեժիմի սահմանում, թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի, ուժեղ ներգործող նյութեր պարունակող դեղագործական միջոցների և պատրաստուկների, էթիլային սպիրտի, ալկոհոլային խմիչքների, սպիրտ պարունակող արտադրանքի շրջանառության հատուկ ռեժիմի սահմանում.

15) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած և տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ նման միջոցներ չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով.

16) արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով՝ անհրաժեշտության դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի ու այլ միջոցների օգտագործում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նյութական փոխհատուցմամբ:

2. Արտակարգ դրության ժամանակ Հանրապետության Նախագահն իրավունք ունի կասեցնել գործադիր իշխանության հանրապետական մարմինների և տարածքային կառավարման մարմինների իրավական ակտերը:

3. Արտակարգ դրության ժամանակ սույն հոդվածով նախատեսված միջոցառումների իրականացումը չի կարող խոչընդոտել ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բնականոն գործունեությունը:

4. Սույն հոդվածի 14-րդ կետով նախատեսված դեպքերում թույլատրվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից ժամանակավորապես առգրավել օրենքով սահմանված կարգով ձեռք բերված զենք և ռազմամթերք, թունավոր, պայթուցիկ և ռադիոակտիվ նյութեր մարտական ու ուսումնական ռազմական տեխնիկա:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի, ձեռքբերման և շրջանառության հատուկ կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Սույն օրենքի իմաստով տվյալ տարածքի բնակիչ է համարվում տվյալ տարածքում հաշվառում ունեցող, ինչպես նաև հաշվառում չունեցող, սակայն տվյալ տարածքում բնակության որևէ ապացույց ունեցող անձը:

Հոդված 8. Արտակարգ դրության տարածքում պետական կառավարման հատուկ մարմինները

1. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և այլ հրատապ հարցեր լուծելու նպատակով Հանրապետության Նախագահի հրամանագրով կարող է ստեղծվել արտակարգ դրության տարածքի պարետատուն (այսուհետ՝ Պարետատուն):

2. Պարետատունն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը: Պարետատունը ղեկավարում է *Հանրապետության Նախագահի կողմից նշանակված պարետը*:

Հոդված 9. Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և ուժերը

1. Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները:

2. Ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները գործադրվում են հետևյալ խնդիրների իրականացման նպատակով.

1) արտակարգ դրության տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմի իրականացման ապահովում.

2) ռեժիմային, հատուկ ռեժիմային և հատուկ պահպանվող օբյեկտների, բնակչության կենսագործունեությունն ու տրանսպորտի գործունեությունն ապահովող, ինչպես նաև բնակչության կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար վտանգ ներկայացնող օբյեկտների պաշտպանություն.

3) անօրինական զինված միավորումների գործունեության դադարեցում.

4) արտակարգ իրավիճակների կանխում, հնարավոր հետևանքների նվազեցում և վերացում, մարդկանց կյանքի, առողջության երաշխավորում ու նյութական արժեքների պահպանություն.

5) սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված սահմանափակումների ապահովում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված խնդիրների իրականացման համար պաշտպանության պետական լիազոր մարմնի ուժերը (այսուհետ՝ զինված ուժեր) կարող են ներգրավվել միայն այն դեպքում, եթե այդ խնդիրները հնարավոր չէ ապահովել ոստիկանության և ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերով:

4. Ձինված ուժերի ներգրավումը պետք է առավելապես ուղղված լինի սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նշված խնդիրների իրականացմանը և ապահովվի ոստիկանության, ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերի հետ փոխգործակցության և փոխօգնության շրջանակներում:

5. Ձինված ուժերի զինծառայողները ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք և մարտական տեխնիկա կիրառում են «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի և մարտական տեխնիկայի կիրառման պայմաններին, կարգին ու սահմաններին համապատասխան:

6. Ձինված ուժերի այն զինծառայողները, որոնք կարող են ներգրավվել սույն հոդվածի 2-րդ մասում նշված խնդիրների իրականացմանը, անցնում են հատուկ պատրաստություն՝ «Ոստիկանության կողմից այդ խնդիրների իրականացման նպատակով գործադրվող հմտությունների և մեթոդների վերաբերյալ, և սույն հոդվածով սահմանված դեպքերում արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը կարող են ներգրավվել միայն այդ պատրաստությունն անցնելուց հետո:

Հոդված 10. Արտակարգ դրության պայմաններում ժամանակավոր սահմանափակումների և կիրառվող միջոցների սահմանները

1. Սույն օրենքում նշված իրավունքների և ազատությունների նկատմամբ սույն օրենքով թույլատրվող սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես այն

նպատակներով, որոնց համար նախատեսվել են, և պետք է լինեն համաչափ՝ հիշյալ նպատակների համեմատությամբ:

2. Արտակարգ դրության պայմաններում գործադիր իշխանության մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին:

3. Արտակարգ դրության պայմաններում սույն օրենքով նախատեսված միջոցառումները և իրավունքների ժամանակավոր սահմանափակումները, պետք է համապատասխանեն արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-րդ, 17-22-րդ և 42-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու ազատություններն արտակարգ դրության ժամանակ չեն կարող սահմանափակվել:

Հոդված 11. Արտակարգ դրության ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների երաշխիքները

1. Արտակարգ դրության ժամանակ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ ունի իր խախտված իրավունքները և ազատությունները վարչական և դատական կարգով պաշտպանելու իրավունք:

2. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներից կամ դրանց հետևանքների վերացման գործողություններից տուժած ֆիզիկական անձանց փոխհատուցվում է կրած նյութական վնասը, և տրամադրվում է անհրաժեշտ օգնություն ՀՀ կառավարության սահմանած կարգով: Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքն ու այլ միջոցներն օգտագործվել են արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով, իրավունք ունեն ստանալու համարժեք փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

3. Արտակարգ դրության ժամանակ առգրավված գույքը արտակարգ դրության դադարումից հետո մեկշաբաթյա ժամկետում վերադարձվում է դրանց սեփականատերերին կամ դրանց նկատմամբ տիրապետման կամ օգտագործման իրավունք ունեցող անձանց:

Հոդված 12. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի և մարտական տեխնիկայի կիրառման պայմաններն ու սահմանները

1. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի և մարտական տեխնիկայի կիրառման՝ օրենքներով սահմանված պայմաններն ու սահմաններն արտակարգ դրության ժամանակ ենթակա չեն փոփոխման:

Հոդված 13. Պարետային ժամի կանոնները խախտած անձանց ձերբակալման կարգը

1. Պարետային ժամի կանոնները խախտած անձինք ենթակա են ձերբակալման արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի կողմից՝ մինչև պարետային ժամի ավարտը, իսկ անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում՝ մինչև նրանց անձի ինքնությունը պարզելը, բայց ոչ ավել, քան 48 ժամով՝ ոստիկանության տարածքային մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի որոշմամբ: Ձերբակալված անձինք, նրանց մոտ եղած առարկաները և տրանսպորտային միջոցները կարող են ենթարկվել զննության, ինչպես նաև դրանց վրա մինչև արտակարգ դրության գործողության ժամկետի ավարտը կարող է արգելանք դրվել: Ձերբակալման և արգելանքի մասին որոշումները ֆիզիկական անձի կողմից կարող են վիճարկվել դատական կամ վարչական կարգով:

Հոդված 14. Արտակարգ դրությունը դադարեցնելու իրավական հետևանքները

1. Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ընդունված և ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և

ազատությունների ժամանակավոր սահմանափակման հետ կապված իրավական ակտերը կիրառվում են միայն արտակարգ դրության գործողության ժամկետի ընթացքում և տարածքում ուժը կորցրած են համարվում արտակարգ դրությունը դադարեցնելու պահից:

Հոդված 15. Անցումային և եզրափակիչ դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ
 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1.	2.	3.	4.
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Լ. Ալավերդյան Ա. Բախշյան Ս. Սաֆարյան Ա. Մարտիրոսյան Զ. Փոստանջյան</p>	<p>1. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Արտակարգ դրության ընթացքում չի կարող սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, դատարանների և Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը:»:</p> <p>1.1. 2-րդ մասից հանել «ներառյալ» բառը, «վտանգ է սպառնում» բառերից հետո դնել բույժ, հանել «անօրինական» բառը:</p>	<p>Ընդունելի է</p> <p>Զի ընդունվել</p>	<p>1. Համապատասխան փոփոխությունները բովանդակային առումով կատարված են «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 7-րդ հոդվածի 3-րդ մասում:</p> <p>1.1. Ըստ ՀՀ Սահմանադրության, արտակարգ դրություն հայտարարվում է ՀՀ սահմանադրական կարգին սպառնացող վտանգի դեպքում: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով թվարկված դեպքերը սպառնիչ չեն և որևէ օրենքով հնարավոր չէ սպառնիչ սահմանել ՀՀ սահմանադրական կարգին սպառնացող վտանգների սպառնիչ ցանկ:</p>

	<p>2. Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասում «սահմանված կարգով» բառերից հետո գրել «՝ Սահմանադրության 81-րդ հոդվածում ամրագրված լիազորությունն իրացնելու համար:»:</p> <p>3. Նախագծի 4-րդ հոդվածում</p> <p>ա) 1-ին մասի 8-րդ կետում «օրը» բառից հետո գրել «ժամը» բառը,</p> <p>բ) ավելացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրում չի կարող նախատեսվել որևէ դրույթ, որը կարող է հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված</p>	<p>Չի ընդունվել</p> <p>Չի ընդունվել</p> <p>Չի ընդունվել</p>	<p>2. Լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ հիշյալ դրույթն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ:</p> <p>3.</p> <p>ա) Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրում ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Իսկ հիշյալ հրամանագիրն ուժի մեջ է մտնում միայն հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակման պահից: Գտնում ենք, որ հրապարակման ժամի վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումներ անելն իրատեսական չէ:</p> <p>բ) առաջարկվող լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ առանց նշված դրույթը նախագծում լրացնելու էլ ՀՀ Նախագահի ցանկացած հրամանագիր համաձայն ՀՀ Սահմանադրության 56-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածների չի կարող պարունակել որևէ դրույթ, որը կարող է հակասել ոչ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական</p>
--	--	---	--

	<p>սահմանադրական կարգի հիմունքներին»:</p> <p>4. Նախագծի 7-րդ հոդվածի</p> <p>ա) 1-ին մասի 15-րդ կետը հանել,</p> <p>բ) 3-րդ մասում «և ՀՀ Սահմանադրական դատարանի» բառերից հետո գրել «, ՀՀ Սահմանադրական դատարանի և դատարանների» բառերը:</p> <p>5. Նախագծի 8-րդ հոդվածում հստակ սահմանել Պարետատան և պարետի իրավասությունները:</p>	<p>Չի ընդունվել</p> <p>Ընդունվել է</p> <p>Չի ընդունվել</p>	<p>կարգի հիմունքներին, այլև ՀՀ Սահմանադրության մյուս բոլոր դրույթներին և օրենքներին:</p> <p>4.</p> <p>ա) առաջարկությունն անհասկանալի է և հիմնավորված չէ:</p> <p>բ) Նախագծի 3-րդ մասում «ՀՀ Սահմանադրական դատարանի» բառերից հետո լրացվել է «, ՀՀ դատարանների» բառը:</p> <p>5. Նախագծով սահմանվում է, որ պարետատունն իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և պաշտպանության նախարարության լիազորությունները սպառիչ սահմանված են համապատասխան իրավական ակտերով, իսկ պարետատունը միայն պետք է իրականացնի վերջիններիս միասնական ղեկավարումը:</p> <p>6.</p> <p>ա) Հարկ է նկատի ունենալ, որ նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրելիս հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության քրեական</p>
--	--	--	---

	<p>6. Նախագծի 9-րդ հոդվածի</p> <p>ա) 2-րդ մասի 3-րդ կետից հանել «անօրինական» բառը:</p> <p>բ) 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը հանել:</p> <p>7. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասում «, և պետք է լինեն համարժեք՝ հիշյալ նպատակների համեմատությամբ» բառերի փոխարեն գրել «բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման</p>	<p>Չի ընդունվել</p> <p>Չի ընդունվել</p> <p>Չի ընդունվել</p>	<p>օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված դրույթը:</p> <p>բ) Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները:</p> <p>Իսկ Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանվում է, թե որ դեպքերում, ինչ կարգով և ինչ սահմանափակումների շրջանակներում զինված ուժերը կարող են մասնակցել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը:</p> <p>Առաջարկությունն ընդունվելու դեպքում ՀՀ զինված ուժերը կարող են ներգրավվել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը ցանկացած ժամանակ՝ առանց որևէ սահմանափակման, ինչը հակասում է օրինագծի հայեցակարգին:</p> <p>7. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առաջարկությունն ըստ էության բովանդակային առումով ի սկզբանե ներառված էր նախագծի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերում: Բացի այդ, գտնում ենք, որ նախագծում առկա խմբագրությունն առավել ընդունելի է, քանի որ առաջարկությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում կիրառվող իրավական տերմինաբանությանը:</p> <p>8. Պարզ չէ, թե ինչ բացառությունների մասին է խոսքը, քանի որ նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 12-րդ կետերով սահմանված պահանջների խախտման</p>
--	--	---	---

	<p>միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած մյուս պարտավորությունների հետ:» բառերը:</p> <p>8. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և մի շարք այլ օրենքներում նախատեսել համապատասխան բացառություններ՝ Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 12-րդ կետերի, ինչպես նաև Նախագծի այլ դրույթների իրականացման ապահովման համար:</p> <p>9. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1.1-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.1. Հատուկ նիստ գումարվելու պահից 3 ժամվա ընթացքում Ազգային ժողովի պատգամավորները պարտավոր են ներկայանալ հատուկ նիստին:»:</p>	<p>Չի ընդունվել</p> <p>Ընդունվել է մասնակի</p>	<p>համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ: Նախագծին կից ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 12-րդ կետերի խախտման համար նախատեսված է միայն վարչական պատասխանատվություն:</p> <p>9. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում «հոդվածը 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով. «1.1. Եթե հատուկ նիստ գումարվելուց հետո 3 ժամվա ընթացքում քվորում չի ապահովվում, ապա նիստը սկսվում է անկախ քվորումի առկայությունից:» բառերը փոխարինել</p> <p>«հոդվածում՝ 1) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ. «1.1. Եթե Հանրապետության Նախագահի հրամանագրի հրապարակումից հետո՝ 3 ժամվա ընթացքում քվորում չի ապահովվում, ապա նիստը սկսվում է անկախ քվորումի առկայությունից:», 2) լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումները քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ բացառություններով՝ ա) հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահը կամ նրա ներկայացուցիչը.բ) հարակից</p>
--	--	--	---

			<p>զեկուցումներ չեն լինում.գ) քննարկումն ավարտվում է Հանրապետության Նախագահի կամ նրա ներկայացուցչի եզրափակիչ ելույթով՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:» բառերով:</p>
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Հովհաննեսյան, Ա. Մինասյան, Ա. Ռուստամյան, Ա. Նռանյան</p>	<p>1. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագծի.</p> <p>1. 1-ին հոդվածում «իշխանությունը գրավելու փորձը» բառերը փոխարինել «իշխանությունը յուրացնելը» բառերը:</p> <p>2. 2-րդ հոդվածում «հրամանագրով» բառից հետո լրացնել «Ազգային ժողովի որոշմամբ» բառերը:</p> <p>3. 6-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Արտակարգ դրության միջացառումները կարող են դադարեցվել կամ չեղյալ հայտարարվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշմամբ: Արտակարգ դրությունը համարվում է նաև դադարեցված, եթե Ազգային ժողովի որոշմամբ դադարեցվել կամ չեղյալ են հայտարարվել արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված բոլոր միջոցառումները»:</p>	<p>Ընդունվել է մասնակի</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է մասնակի</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածում «իշխանությունը գրավելու փորձը» բառերը փոխարինվել են «իշխանությունը զավթելու փորձերը» բառերով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի բովանդակության:</p> <p>2. Նախագծի 2-րդ հոդվածում «հրամանագրով» բառից հետո լրացվել են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշմամբ» բառերը:</p> <p>3. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը իրավասու է չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր կամ առանձին միջոցառումների իրականացումը: 3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու դեպքում արտակարգ դրությունը դադարում է, իսկ առանձին միջոցառման իրականացումը չեղյալ հայտարարվելու դեպքում դադարում է այդ միջոցառման հետագա իրականացումը:»:</p>

	<p>4. 7-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ «գործադուլների արգելում, իրավաբանական անձանց (բացառությամբ կուսակցությունների և զանգվածային լրատվամիջոցների) գործունեության կասեցում»:</p> <p>5. 9-րդ հոդվածի 2-րդ մասում «Ոստիկանության, ազգային անվտանգության և պաշտպանության պետական լիազոր մարմինների» բառերը փոխարինել «Ոստիկանության և ազգային անվտանգության» բառերով:</p>	<p>Չի ընդունվել</p> <p>Չի ընդունվել</p>	<p>4. Հարկ է նկատի ունենալ, որ նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասին 6-րդ կետով նախատեսվում է արգելել գործադուլների, ինչպես նաև իրավաբանական անձանց գործունեությունը կասեցնող կամ դադարեցնող այլ միջոցառումների իրականացումը, այլ ոչ թե արգելել կամ կասեցնել համապատասխան իրավաբանական անձանց գործունեությունը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 80-րդ հոդվածը, որով կարգավորվում են կուսակցությունների գործունեության կասեցման հետ կապված հարաբերությունները: Հիշյալ հոդվածի համակարգային վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ կուսակցությունների գործունեությունը կարող է կասեցվել միայն Սահմանադրական դատարանի որոշմամբ, մինչդեռ հիշատակված դրույթում խոսքը մասնավորապես անձանց կողմից կազմակերպվող գործադուլների արգելքի մասին է:</p> <p>5. Անհրաժեշտ է նկատի ունենալ, նախագծով հստակ նախատեսված է, որ պաշտպանության պետական լիազոր մարմնի ուժերն ու միջոցները արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով կարող են օգտագործվել բացառապես այն դեպքերում, երբ արտակարգ դրության ժամանակ առաջացող խնդիրների իրականացումը հնարավոր չէ ապահովել ոստիկանության և ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերով:</p>
--	--	---	--

	<p>6. 9-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված խնդիրների իրականացման համար կարող են ներգրավվել Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության ուժերը»: Նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը հանել:</p> <p>II. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին օրինագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ պարբերությամբ.</p> <p>«Հատուկ նիստի ժամանակ արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով նախատեսված միջոցառումները դադարեցնելու կամ չեղյալ ճանաչելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող են առաջարկել Ազգային ժողովի խմբակցությունները, պատգամավորական խմբերը կամ պատգամավորների առնվազը մեկ հինգերորդը: Սույն մասով նախատեսված որոշման նախագծերը քննարկվում են հատուկ նիստի ընթացքում սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով»:</p>	<p>Չի ընդունվել</p> <p>Ընդունվել է մասնակի</p>	<p>6. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվականին ընդունված օրենքով, որը պետք է կիրառվի ցանկացած արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում՝ անկախ արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքից:</p> <p>II. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի 42-րդ հոդվածում՝</p> <p>1) լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«1.1. Եթե հատուկ նիստ գումարվելուց հետո 3 ժամվա ընթացքում քվորում չի ապահովվում, ապա նիստը սկսվում է անկախ քվորումի առկայությունից»:</p> <p>2) լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումները քննարկվում են սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ բացառություններով՝ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահը կամ նրա ներկայացուցիչը, իսկ մշտական հանձնաժողովներից հանդես է գալիս մեկական ներկայացուցիչ: Հատուկ նիստն ավարտվում է Հանրապետության Նախագահի կամ նրա ներկայացուցչի եզրափակիչ ելույթով»:</p>
--	---	--	--

<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Սահակյան</p>	<p>«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ</p> <p>1. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «այն հանգամանքների առկայության դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ է սպառնում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում» բառերով», իսկ «անօրինական զինված խմբավորումների կազմակերպումը և գործունեությունը» բառերից հետո լրացնել «արտակարգ իրավիճակները» բառերը:</p> <p>2. Նախագծի 3-րդ հոդվածի ա) 2-րդ մասում «իրամանագիրը ենթակա է» բառերը փոխարինել «իրամանագիրը, ինչպես նաև իրամանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները ենթակա են» բառերով,</p> <p>բ) 4-րդ մասում «դեպքերում» բառից հետո լրացնել «բացառությամբ իրավական ռեժիմի մեղմացման դեպքերի» բառերը:</p> <p>3. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:</p> <p>4. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «արտակարգ դրության տարածքում» բառերը փոխարինել «անձանց» բառով:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>1. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>2. ա. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>բ. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>3. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>4. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
---	---	--	--

	<p>5. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «գործունեությունը կանոնակարգող» բառերը:</p> <p>6. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հանել «ՀՀ կառավարության կողմից» բառերը:</p> <p>7. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «11) պարետային ժամի սահմանում, այսինքն՝ ամբողջ օրը կամ օրվա որոշակի ժամանակահատվածում առանց անձը հաստատող փաստաթղթերի և (կամ) հատուկ թույլտվության փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելում, ինչպես նաև օրվա որոշակի ժամանակահատվածում փողոցներում ու այլ հասարակական վայրերում գտնվելու արգելում.»:</p> <p>8. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «արգելում» բառից հետո լրացնել «հատուկ ռեժիմի սահմանում» բառերը:</p> <p>9. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 16-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «16) արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով՝ անհրաժեշտության դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի ու այլ միջոցների օգտագործում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նյութական փոխհատուցմամբ.»:</p> <p>10. Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասում «բնականոն գործունեությունը» բառերից առաջ լրացնել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի» բառերը:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>5.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>6.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>7.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>8.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>9.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
--	--	---	--

<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լ.Ալավերդյան</p>	<p>11. Նախագծի 7-րդ հոդվածը լրացնել 6-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «6. Սույն օրենքի իմաստով տվյալ տարածքի բնակիչ է համարվում տվյալ տարածքում հաշվառում ունեցող, ինչպես նաև հաշվառում չունեցող, սակայն տվյալ տարածքում բնակության որևէ ապացույց ունեցող անձը:»:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>10.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Սահակյան</p>	<p>12. Նախագծի 9-րդ հոդվածում լրացնել 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «6. Զինված ուժերի այն զինծառայողները, որոնք կարող են ներգրավվել սույն հոդվածի 2-րդ մասում նշված խնդիրների իրականացմանը, անցնում են հատուկ պատրաստություն՝ ՀՀ ոստիկանության կողմից այդ խնդիրների իրականացման նպատակով գործադրվող հմտությունների և մեթոդների վերաբերյալ, և սույն հոդվածով սահմանված դեպքերում արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը կարող են ներգրավվել միայն այդ պատրաստությունն անցնելուց հետո:»:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>11.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Սահակյան</p>	<p>13. Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց գույքն ու այլ միջոցներն օգտագործվել են արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման նպատակով, իրավունք ունեն ստանալու համարժեք փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:»:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>12.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>13.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

	<p>14. Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ընդունված և ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակման հետ կապված իրավական ակտերը կիրառվում են միայն արտակարգ դրության գործողության ժամկետի ընթացքում և տարածքում ուժը կորցրած են համարվում արտակարգ դրությունը դադարեցնելու պահից:»:</p> <p>15. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:</p> <p>16. Նախագծում «Հայաստանի Հանրապետության Նախագահ» (նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասում «ՀՀ նախագահ» բառերը) բառերը փոխարինել «Հանրապետություն Նախագահ» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով» բառերը՝ «Ազգային ժողով» բառերով:</p> <p>17. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «հոդվածով սահմանված դեպքում» բառերը փոխարինել «հոդվածին համապատասխան» բառերով:</p> <p>18. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասից «Հանրապետության» բառը հանել :</p> <p>19. Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «և» բառը փոխարինել «ինչպես նաև» բառերով :</p> <p>20. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «պարետը, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>14. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>15. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>16. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>17. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
--	--	---	---

	<p>Նախագահի կողմից» բառերը փոխարիել «Հանրապետության Նախագահի կողմից նշանակված պարետը» բառերով:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>18.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>19.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>20.Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կ. Նահապետյան</p>	<p>«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 9-րդ հոդվածում անհրաժեշտ է նախատեսել դրույթ, որով կգարավորվեն զինված ուժերի և ոստիկանության ու ազգային անվտանգության մարմինների ուժերի միջև փոխգործակցության և փոխօգնության հետ կապված հարաբերությունները:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «4. Ձինված ուժերի ներգրավումը պետք է առավելապես ուղղված լինի սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նշված խնդիրների իրականացմանը և ապահովվի ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների ուժերի հետ փոխգործակցության և փոխօգնության շրջանակներում:»:</p>
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Ն.Ձոհրաբյան Ա.Սաֆարյան</p>	<p>1. Օրենքի նախագծի 9-րդ հոդվածում զինված ուժերի օգտագործման հնարավորությունն առավելագույնս վերապահել ա) արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին մասնակցության, բ) ահաբեկչական գործողությունների կանխմանը և չեզոքացմանը մասնակցության դեպքերին ... Օրենքի նախագծի 9-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասից և 2-րդ մասի 1-ին պարբերությունից հանել «և պաշտպանության» բառերը. 2) 2-րդ մասի 4-րդ կետից հետո լրացնել նոր կետով հետևյալ բովանդակությամբ՝ «5) ահաբեկչական գործողությունների կանխում և չեզոքացում.», Այդ կապակցությամբ 5-րդ կետը համարել 6-րդ կետ.</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>Հակասում է զինված ուժերի կիրառման հայեցակարգային մոտեցումներին, որոնց համաձայն զինված ուժերի կիրառումը հնարավոր է 3-րդ հոդվածի 2-րդ մասում հիշատակված դեպքերում, սակայն նույն հոդվածի հաջորդող մասերում ամրագրված մի շարք սահմանափակումների պահպանմամբ:</p>

	<p>3) 3-րդ մասում «2-րդ մասում» բառերը փոխարինել «2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են ներգրավվել միայն այն դեպքում» բառերը՝ «կարող են ներգրավվել նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերը» բառերով.</p> <p>4) հանել 4-րդ և 5-րդ մասերը:</p>		
	<p>2. Օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝ ա) 2-րդ մասում ամբողջական սահմանել սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգների ցանկը, ըստ առանձին կետերի՝ նրանում ներառելով արտակարգ իրավիճակների հանգամանքը, բ) 3-րդ մասով սահմանված դրույթը շարադրել 2-րդ մասի սկզբում ... Օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝</p> <p>1) 2-րդ մասը «սպառնում» բառից հետո լրացնել «, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց դրա հայտարարելու:</p> <p>3. Սույն հոդվածի երկրորդ մասում նշված հանգամանքներ են՝</p> <p>1) արտակարգ իրավիճակները.» բառերով, այնուհետև՝ ինչպես տեքստում, մնացյալ հանգամանքները շարադրելով առանձին կետերով:</p>	<p>Չի ընդունվել</p>	<p>«ա» կետով արված առաջարկությունը չի ընդունվել, քանի որ որևէ օրենքով հնարավոր չէ տալ սահմանադրական կարգին սպառնացող վտանգների ամբողջական և սպառիչ ցանկ, անգամ այն դեպքում, երբ օրենքի նախագծում հիշատակվում են արտակարգ իրավիճակները:</p> <p>«բ» կետով արված առաջարկը չի ընդունվել, քանի որ անմիջական վտանգի վերացման անհնարինության գնահատումը չի կարող լինել անմիջական վտանգի առկայության գնահատման պայման:</p>